ԿԱՐԾԻՔ

Հանրային հեռուստաընկերության «Կերպարից դուրս. Սուպեր Սաքո» հաղորդման վերաբերյալ

Հանրային հեռարձակողի խորհրդի ուշադրությունից չի վրիպել սոցցանցերում և մամուլում հնչած արձագանքը՝ Հանրային հեռուստաընկերության «Կերպարից դուրս. Սուպեր Սաքո» (14.05.2023) հաղորդման վերաբերյալ, որտեղ երգիչ, ռեփեր Սարգիս Բալասանյանը խոսելով մուղամի մասին, նշել է, թե իբր Կոմիտասը *«հայկական երաժշտությունը մատուցել է Եվրոպային, եվրոպացիք չեն հասկացել քառորդ նոտաները, այսինքն, էդ ծռած նոտաները, այդ մուղամը, ու իրենց տհաճ է թվացել: Իսկ ինքը հայ երգը տարածելու համար հետ է եկել, ասելով, թե՝ չսիրեցին, բռնեք ջնջեք: Բոլոր քառորդ նոտաները ջնջել են»:*

Հանրային հեռուստաընկերությունը պարզաբանել է, որ «*ներկայացնում են տարբեր անհատների կարծիքներ, և դրանց ցուցադրումը չի նշանակում, որ Հեռուստաընկերությունը կիսում է արտահայտված մտքերը: Հանրային հետաքրքրություն ներկայացնող անձանց հայացքները կարող են պարունակել վիճելի դրույթներ, ազատ հասարակությունում դրանք կարող են քննարկվել, քննադատվել. դա է պահանջում բազմակարծությունը»:*

Երգչի մտքերին արձագանքել են մշակութային մի խումբ գործիչներ: Հանրային հեռարձակողի խորհուրդը ուսումնասիրել է «Կերպարից դուրս» հաղորդման նշված թողարկումը, հնչեցրած բողոքները, սակայն նպատակահարմար չի գտել էթիկայի խախտման հիմքով քայլեր ձեռնարկելու: Որպես խնդրի հանգուցալուծում՝ խորհուրդը իրավաչափ և տեղին է համարում Կոմիտասի թանգարան-ինստիտուտի ***Հայտարարությունը*** այս հաղորդման առիթով: